Ծագումը 02

Հերմետիկ. 04

Մերժված ավետարաններ 06

Տամպլիերներ 07

Վերածնունդ. 10

Կաբալա 12

Հերմետիկություն. Ազատ Որմնադրություն 15

Ուրարտուի կայսրությունը

Logia Urartu № 442

Free & Accepted Masons
www.logiaurartu.org.ar

Ուրարտուի կայսրությունը: Ծագումը

արձանագրություններում արդեն նշվում են Վանից դեպի հարավ գտնվող Ուրուատրի կատարված արշավանքների մասին: ,Իմ աստվածային տիրակալության տարիներին Ուրուատրիի հողերն ապստամբեցին իմ դեմե,- ասում է Սալմանասար 1-ինը: Սա

Ուրարտուի մասին մինչեւ այժմ հայտնի առաջին տեղեկությունն է եւ ցույց է տալիս, որ մ.թ.ա. 13-րդ դարում դեռեւս կենտրոնացած չեն եղել մեկ թագավորության մեջ, այլ հանդիսանում էին առանձին ցեղեր, յուրաքանչյուրն իր ցեղապետի գլխավորությամբ:

Սալմանասարի որդին՝ Թիկուլթի Նինուտրա 1-ինը /1261 – 1218 մ.թ.ա./ նույնպես պատերազմներ է մղում Վանի ավազանի բնակիչների դեմ, որոնց անվանում է ,Նաիրիի ժողովուրդներե: Վանի շրջանում հաստատվել էին տարբեր հնդկա- արիական ժողովուրդներ, որոնցից էին նաեւ հիթիթները՝ արիացիներ, որ գաղթել էին դեպի արեւելք ,ծովի ժողովուրդներիե արշավանքների արդյունքում իրենց կայսրության անկումից հետո, փռուգիացի մուշկերը, որոնք փռուգիացիների մի ճյուղն էին, նույնպես արիացիներ, որ անցնելով Դարդանելով ներխուժել էին Անատոլիա եւ հաստատվել Վանի շրջակայքում; հուրրիթները, կործանված Միտանիի թագավորությունից ու վերջապես ուրարտացիները՝ արիացի ռազմատենչ ժողովուրդ: Այս վերջիններս էին, որ զբաղվեցին իշխանության կենտրոնացմամբ մ.թ.ա. 9-րդ դարում ու իր տիրապետությունը պարտադրեց մյուսներին, թագավորությունը կոչելով Բիայնիլի, մինչ ասորացիներն այն կոչում էին Ուրարտու կամ Ուրաշտու, ինչպես նախկինում:

Մ.թ.ա. մոտավորապես 1000 թվականին Նաիրի- Ուրարտական դաշնության կազմի մեջ մտնող մանր իշխանություններում ու իշխող տոհմերում նոր հասարակական – քաղաքական ուժեր են ի հայտ գալիս: Ասորեստանի հարձակումներին դիմակայելու անհրաժեշտությունը ստիպում է միավորվել ու միավորման սկզբունքը սերտորեն կապված էր Միջագետքի միահեծան գահակալ թագավորների կողմից կառավարվող կայսրության գաղափարի հետ, որ աստիճանաբար տանում էր դեպի Վանի շրջանում տիրակալների մի կարեւոր դասի հայտնվելուն: Այդ գահակալ տոհմերը ստեղծեցին մի հզոր թագավորություն, որում միավորեցին Վանի ավազանում բնակվող ժողովուրդներին եւ կառուցեցին իրենց մայրաքաղաքը՝ Տուշպան, Վանա լճի ափին: Այդ թագավորության սահմանները հասնում էին մինչեւ Կովկաս՝ Հյուսիսում, Հայկական Տավրոս՝ Հարավում, Ուրմիա լիճը՝ Արեւելքում եւ Եփրատ գետի ակունքներն՝ Արեւմուտքում: Նրանց տիրապետությունը տարածվում էր Արեւելյան Անատոլիայով ավելի քան 800 մղոն՝ Արեւելքից արեւմունք եւ 500 մղոն Հյուսիսից՝ Հարավ:

Ուժեղ ու միավորված պետության ստեղծումը Հայկական Լեռնաշխարհում ու Արեւելյան Անատոլիայում, պահանջում էր եզակի

որակներ, կորով ու կամք: Ընդհանրապես գրեթե չինշվում այն փաստը, որ Ուրարտու թագավորության ամբողջ
տարածքի կլիման ավելի մոտ է թերեւս Սիբիրի քան թե հարեւան Միջագետքի կլիմային՝ ձմեռները խիստ, ցուրտ ու երկար են, տարածքի մեծ մասն, առնվազն չորս ամիս, ծածկված է 4 ոտնաչափ խորությամբ ձյունով, անհնար դարձնելով բնակչության տեղաշարժն ու ճամփորդությունները, մեկուսացնելով յուրաքանչյուր համայնքն իր դրացիներից: Կլիմայական պայմանների խստությունը տեղի բնակիչների մեջ
զարգացրել էր ուժ ու դիմադրողականություն, որ թույլ տվեց նրանց մրցակցել իրենց հարավային հզոր թշնամիների հետ, որոնք բնակվում էին Միջագետքի բերրի հարթավայրերում, մեղմ կլիմայի ավելի հարմար պայմաններում:

Ուրարտուի քաղաքական պատմության սկիզբը լավ տեսանելի է Ասորական աղբյուրներում, որոնք մեզ ժամանակագրական տվյալներ են ներկայացնում Վանի թագավորության տոհմերի վերաբերյալ: Քանի որ Տուշպան /ներկայումս՝ Վան/ գտնվում
էր Ասորեստանի մայրաքաղաք Նինվերից 200 մղոնից պակաս հեռավորության վրա, պարզ է , որ երկու պետությունները չէին կարող խաղաղ գոյակցել երկար ժամանակ, ուստի հաճախակի էին պատերազմները, սակայն փաստ է, որ նրանցից ոչ մեկը չի
կարողացել կործանել մյուսին: Ասորական ուժեղ պետության ծագումից հետո նրա
հզորությունը միշտ էլ վիճարկվել է ուրարտացիների կողմից եւ Նինվեի գահակալների միակ ցանկությունը Մերձավոր Արեւելքի միակ տիրակալները դառնալն էր:

Ասորեստանի թագավոր Սալմանասար 1-ինի արձանագրություններում նշվում է
Ուրուատրին, ինչպես արդեն ասվել է: ,Ուրուատրիե կամ ,Ուրուադրիե բարդ բառ է՝ ,ուրու – ատրիե կամ ,ուր- ատրիե, որի երկրորդ բաղադրիչը՝ ,ատրե հայերեն նշ□անակում է ,կրակ, ,իե՝ տեղանուն ցույց տվող մասնիկ է, իսկ առաջին բաղադրիչը՝ ,ուրե կամ ,ուրուե նշանակում է տեղ, հետեւաբար՝ Ուրարատու նշանակում է ,կրակի տեղե, ,Կրակի երկիրե: Աքադացիներն այն ճանաչում էին որպես Ուրարտու, բառ որ
կազմված էր երկու բաղադրիչներից՝ առաջինը՝ ,ուրաե եւ ,ուրտաե, երկուսն էլ
նշանակում էին ,բարձրե, այսինքն արտահայտում էր ,բարձրից բարձրե , կամ ,բարձրաբերձե իմաստը:

Բաբելոնացիներն այն կոչում էին ,Ուրաշտուե, մինչ ,Աստվածաշունչն այն կոչում է ,Արարատի թագավորությունե,որ Ուրարտու բառի եբրայերեն ընկալումն էր:

Մյուս կողմից, ըստ մի շարք հետազոտողների, հույն պատմիչ Հերոդոտը կիրառում I
,Ալարոդիոյե տարբերակը, որ բխում է հունարենեի ,Արիարտոսե տերմինից:

Հերմետիկություն.
Հերմետիկ.

Ազատ Որմնադրության «Ուրարտու» օթյակն որպես հիմք է ընդունում «Կորպուս Հերմետիկում» (CORPUS HERMlTICUM) աշխատությունը, որ միշտ գտնվում է խորանի վրա՝ կարկինի և ուղղաչափի հետ միասին:

Թռուցիկ կերպով վերհիշենք Հերմետիզմի պատմությունը՝ սկսած նրա ծնունդից մինչև ընդգրկվելը տարբեր շարժումների մեջ, որոնցից կարևորագույներն էին Տամպլիերները, Ռոսակրուսները և Ազատ Որմնադրությունը:

Հերմետիզմի ավանդույթը սկիզբ է առել Հին Եգիպտոսում և կարողացել է զարգանալ՝ հասնելով զգալի մակարդակի, ինչում կարելի է համոզվել ծանոթանալով նրա նվիրյալների աշխատանքներին: Այդ զարգացումը տեղի է ունեցել ոչ թե փարավոնների Եգիպտոսում այլ Պտղոմեոսների՝ տարբեր մշակույթների ազդեցությունից հարստացած եգիպտական մշակույթի վրա հիմնված, սակայն զգալի աստիճանի «հելենիզացումից» հետո միայն, կենտրոնացած մեկ քաղաքում՝ Ալեքսանդրիայում: Ալեքսանդր Մակեդոնացին Եգիպտոս էր մտել մ.թ.ա. 332 թվականին որպեսզի Նեղոսի գետաբերանին հիմնադրի իր անունը կրող մի քաղաք, չնայած հույները դեռևս մ.թ.ա. 7- րդ դարից սկսած եկել էին Եգիպտոս և իրենց գործունեություն էին զարգացրել տարբեր ուղղություններով:

Պտղոմեոսը՝ Ալեքսանդր մակեդոնացու զորավարներից մեկը, Մակեդոնացու մահվանից հետո տեր կանգնեց եգիպտոսին՝ ինքն իրեն տալով «Պտղոմեոս Սոտեր» (փրկարար) տիտղոսը և երեք հարյուրամյակ շարունակ նրա տոհմից 20 միապետեր գահի վրա հաջորդել են նրան: Այս տոհմը հաստատեց գավառային կառավարիչների համակարգը, ընդ որում բոլորը՝ օտարներ: Գավառները կենտրոնական իշխանության կողմից վերահսկվում էին սահմանափակ թվով պաշտոնյաների միջոցով, որոնք նույնպես օտարազգի էին: Տարածքը բաժանելով գավառների, որոնք կոչվում էին «նոմոս» (հունարեն՝ նոմոի) և ստեղծելով վարչական կառավարման համակարգ, կամա թե ակամա ստիպեցին հասնել «հելենիզացման» որոշակի մակարդակի, մասնավորապես լեզվի բնագավառում, որ անհրաժեշտ էր, եթե որևէ եգիպտացի ցանկանում էր առաջադիմել նոր կառավարիչների օրոք: Այսպիսով՝ Պտղոմեոսների և հետո հռոմեական իշխանության տակ, հելենիզմը դառնում է մշակութային գերիշխող ուղղություն՝ տարածվելով Եգիպտոսով մեկ, իր հետ բերելով նաև եգիպտացիներին մինչ այդ օտար մի շարք հավատալիքներ: Օտարներն էլ իրենց հերթին ընդունում են եգիպտականն ու հարմարվում եգիպտական մշակույթային միջավայրին:

Պտղոմեոս 1-ի նախաձեռնությամբ ստեղծվում է հանրահայտ գրադարանը (հիմնադրման տարեթիվը ճշգրիտ հայտնի չէ)՝ որի կազմակերպիչն էր Արիստոտելի ժամանակակից Դեմետրիո դե Ֆալցերան:

Գրադարանն իր հավաքածոյում ընգդրկում էր պապիրուսներ, փորագրված և նույնիսկ

դաջման միջոցով «տպագրված» գրքեր, և Հուլիոս Կեսարի ժամանակներում հռչակ էր տարածվել, թե գրադարանի հավաքածոն ընդգրկում է գաղտնի գիտելիքներ պարունակող գրքեր, որոնք հանդիսանում են անսահմանափակ իշխանության բանալիներ:

կարևոր է ընդգծել քաղաքում տիրող հասարակական և մշակութային մթնոլորտը, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Ալեքսանդրիան վեր է ածվում գիտության մայրաքաղաքի՝ սնվելով տարբեր մշակույթների խառնարանից՝ հռոմեական գերիշխանության պայմաններում:

Ալեքսանդրիայի գրադարանը շատերի կողմից է հարձակումների ենթարկվել և Հուլիոս Կեսարն առաջին էր, որ գրադարանից տարավ նրա հավաքածոյի մի մասը, մասամբ ոչնչացնելով այն: Ավերիչ հարձակումներից մեկն էլ իկայսրուհի Զենոբիայի կողմից կազմակերպված հարձակումն էր, որին գրադարանը ստիպված էր մեկ անգամ ևս դիմագրավել թշնամիներին: Դիոկլետիանոսը ևս փորձել է այրել գրադարանում պահված բոլոր գրքերն ու ոչնչացնել ալքիմիային վերաբերվող գաղտնիքները: Գրադարնին վերջ են դրել արաբները արդեն մ.թ. 646 թվականին՝ այրելով աստղաբաշխությանն ու ալքիմիային վերաբերվող բոլոր գրքերը:

Այսպիսով Ալեքսանդրիայի հարուստ մշակույթը ձևավորվել էր հունական, հրեական ու իրանական մշակույթների ազդեցության տակ, որոնք միախառնվել էին Եգիպտոսում:

Այս մշակութային ու հոգևոր խառնարանում, մի քանի դարերի ընթացքում, երբ Նեղոսի հովտում իրար էին հաջորդում Պտղոմեոսները, հռոմեացիներն ու բյուզանդացիները, ձևավորվեցին ու ամբողջացան այն գրվածքները, որոնք հետագայում կոչվեցին «ՀԵՐՄԵՏԻԿ»:

«Հերմետիկ» գրվածքներն ուսումնասիրող մասնագետները դրանց ի հայտ գալը բացատրում են որպես Պտղոմեոսների ժամանաշրջանի հունա-եգիպտական, հետագայում՝ հռոմեական և առաջին պարզունակ քրիստոնեական մշակույթների գերբարդ խառնուրդի արդյունք ու պատասխան, որտեղ շոշափվում են աստվածաբանական հարցեր՝ իմաստասիրական ամենալայն առումով, մարդու համար բացահայտում են սկզբնաղբյուրի գաղտնիքները, աստվածայինի, մարդու ու նյութականի բնական ու բարոյական կողմերը, որպեսզի մարդը կարողանա օգտվել այդ գիտելիքներից՝ իր սեփական փրկությանը հասնելու նպատակով:

Ակնհայտ է Նագ Համուդիի հայտնագործության ազդեցությունը Հերմետիկության մասին ունեցած պատկերացումների վրա: Հայտնաբերել հերմետիկ տեսության վերաբերյալ գրվածքներ եգիպտոսում տարածված լեզվով՝ կոպտերենով, իմացական, գնոստիկական մտքի անսահմանության բացահայտ արտահայտության հետ մեկտեղ, ցնցող մարտահրավեր հանդիսացավ իրերի դրվածքի մասին ունեցած հին պատկերացումներին, ըստ որոնց Հերմետիկ տեսությունը միանգամայն հասկանալի էր համարվում հետպլատոնական շրջանի մի հունարեն տեքստով: Շատ հետազոտողներ

կարևորագույն և համապարփակ ուսումնասիրություններ են հրատարակել Նագ Համմուդիի ձեռագրերի պարունակած Հերմետիկ գիտելիքների մասին՝ հիմնվելով Հայկական Սահմանումների վրա (Ծանոթ. Հերմես Եռամեծից մինչև Ասկլեպիոս վերնագրված. «Սահմանումներ»: Հայկական տարբերակը հավանաբար պատկանում է 4-րդ դարի երկրորդ կեսին: «Սահմանումներ» եզրաբառը հաճախ է կիրառվում հունական գրականության մեջ ու նաև հայտնվում է «Կորպուս Հերմետիկումի» - ի հունարեն՝ պլատոնական տարբերակի XVI վերնագրի մէջ, սակայն Հայկական Սահմանումներ գործը հիմնովին տարբեր է): Այդ աշխատությունների համար հիմք են ծառայել նաև հերմետիկ գիտությունները ու եգիպտական իմաստասիրական գրականությունը, ինչպես նաև դրանց հետագա զարգացման ընթացքի ուսումնասիրությունը՝ ասույթներից ու ասացվածքներից մինչև գրական ավելի ընդարձակ ու տրամաբանական շարադրանքներ:

Հունարեն տեքստի և Նագ Համուդիից հայտնաբերված ձեռագրերի ուսումնասիրությունների կարևորագույն արդյունք է հանդիսանում այն, որ այդ ուսումնասիրությունները հաստատեցին այն վարկածը, որ հետազոտողների մեծ մասը՝ որոնց թվում քիչ չէին եգիպտագետները, սխալվում էին՝ թերագնահատելով եգիպտական տարրի առկայությունը հունական ու հռոմեական աշխատություններում, համարելով դրանք միայն «զարդարանք»: Հետազոտողները եկան այն եզրակացության, որ Հերմետիկ ուսմունքի գրվածքները ծագում են այն տարրերից, որոնք առկա են հնագույն եգիպտական իմաստասիրական գրվածքներում, որ մասնավորապես հայտնի են «Հրահանգներ» անվան տակ և թվագրվում են դեռևս Հին Կայսրության ժամանակաշրջանով: Նշված տարրերը որոշակի ժամանակահատվածում հունական արտահայտչաձևեր են գտել հելենիստական մտքին հասանելի լինելու համար:

Հերմետիկություն. Մերժված ավետարաններ (Ապոկրիֆներ).

Մանկության շրջանի Ապոկրիֆներ (Հայկական Ավետարան, XI, 10-23) Հոգևոր Պարսկաստանի Զրադաշտական մոգերը գաղտնի իմաստության բնագավառում խոր գիտելիքներ ունեցողների հիմնավորված համբավ էին վայելում: Կոչվում էին «մոգ» և ղեկավարում էին կրոնական ծեսերը, գուշակություններ անում, բացատրություն տալիս կանխանշաններին ու երազներին, ուսումնասիրում աստղերը:

Քրիստոսի մանկության տարիներին վերաբերվող Հայկական Ավետարանը նշում է պարսկաստանից ժամանած 3 մոգերի, որոնք ինչ որ գիրք են բերել մանկանը

նվիրելու համար: Հերոդեսի առջև նրանք բացատրում են, որ իրենց ժամանման նպատակն է մանկանը հանձնել այդ գիրքը, Աստծո ձեռքով գրված Կտակարանը, որ ժամանակին Աստված հանձնել է Ադամին, և որը կրում է Աստծո ստորագրությունն ու կնիքը: Գիրքը նրանց նախնիները պահել են հանձնելով հորից՝ որդուն, սերնդից սերունդ, և որ դրա գոյության մասին ոչ մի այլ ազգ, իրենցից զատ, չունի ուղղակի կամ անուղղակի որևէ տեղեկություն: Այն գտել են մոգերը ինչ որ հատուկ «սրահում»:

Ինչպես նշում է Հայկական մերժված Ավետարանը, Մելքոն թագավորը, որի մոտ պահվում էր այդ Կտակարանը, որպես նախնիներից մնացած թանկարժեք գանձ, այն հանձնում է մանուկ Հիսուսին: Նշված գործը, որ ուղղված էր Ադամին, կրում էր հետևյալ գրությունը. «Վեց հազար թվականին, շաբաթվա վեցերորդ օրը ստեղծեցի քեզ, վեցերորդ ժամին ես քեզ կուղարկեմ իմ միակ որդուն՝ Բանն Աստվածայինն, որ մարմին կառնի քո սերունդներից և կդառնա Մարդու զավակ† և այնժամ, օհ, Ադամ, ինձ միացած մաքուր հոգով և անմահ մարմնով, կաստվածանաս դու և կկարողանաս, ինչպես ես, ճանաչել չարն ու բարին»: Հաշվի առնելով այս մերժված ավետարանը և նրանում պատմվածն ընդունելով փոխաբերական իմաստով, կարող ենք ենթադրել որ այս «Կտակարանը» մասն է կազմում Հերմետիկ ավանդույթների և թաքուն անցել է սերնդից սերունդ՝ հասնելով պարսիկ մոգերին ու Հիսուսի ծննդյան ժամանակահատվածում գտնվել է նրանց հսկողության տակ: Ուշադրություն է գրավում այդ գիրքը «հայտնաբերելու» վայրը՝ «հատուկ սրահում», որ կարող էր լինել նաև Սողոմոնի տաճարը: Բացի այդ, ասելով. «† և այնժամ, Ադամ, ինձ միացած, կաստվածանաս դու և կկարողանաս ճանաչել չարն ու բարին», կրկնում է Հերմետիզմի հիմնական գաղափարը՝ մարդ արարածի աստվածային բնույթը, ինչպես ասված է մեր թվագրության առաջին դարերում Եգիպտոսում գրված հունական բացահայտորեն գնոստիկական տեքստերում.«Եթե Աստծոն չհավասարվես, ապա չես կարող նրան հասկանալ, քանի որ միայն հավասարներն են միմյանց հասկանում»:

Հերմետիկություն.
Տամպլիերներ.

1118 թվականին ճամփա է ընկնում դեպի Ավետյաց երկիր ինը ձիավորներից կազմված մի խումբ, գլխավորությամբ Հուգո դե Պայնի, որին Բեռնարդոն լավ ճանաչում էր որպես Շամպայնի Կոմսի պաշտոնյա ներկայացուցիչ, և մեկ ուրիշի, որ Բեռնարդի մոտ ազգականն էր՝ Անդրես Մոնբարի, նույնպես սիստերնացի:

Չնայած նրանք այնտեղ գործունէություն

ծավալելու համար չեն ժամանում, սակայն տեղավորվում են Սողոմոնի տաճարի կից բնակելի շինություններն ու շուտով դառնում տեղի միակ բնակիչները: Մաքրում են ստորգետնյա խուցերը† Ինչ ընդարձակություն 9 աղքատ հեծյալների համար: Այս խորհրդավոր անցքերը մեկ բացատրություն ունեն՝ նրանք չեն եկել ուխտավորներին պաշտպանելու համար միայն, այլ եկել էին գտնելու, պահելու, հանելու համար մի ինչ որ շատ կարևոր բան, սրբազան նշանակության ինչ որ բան, որ գտնվում է այդ կառույցներում՝ Միաբանության տապանակն ու Օրենքների սալիկները: Իհարկե, մենք շատ կուզեինք իմանալ թե ինչ բեռ ունեին իրենց հետ այս հեծյալները, երբ ավելի ուշ Թրոյում ներկայացան խորհրդին: Արդյոք Կլարիվալում թե Ցիստերում են պահել իրենց հետ բերած վավերագրերը՝ Օրենքների սալիկները կամ՝ դրանց պատճենը: Պատասխանը միշտ գաղտնիք կմնա: Սակայն խորհրդի կողմից կանչված անձանց աստիճանները ցույց են տալիս, որ նրանք ընտրվել են շատ մտածված: Բոլորն էլ ցիստերական կամ բենեդիկտյան աբբայության անդամներ էին, որոնց մեջ երկու աշխարհական կար՝ Շամպայնի և Նավարրայի կոմսերը: Թրոյի խորհուրդին Հուգո Պայնեն առաջարկեց ստեղծել մի նոր միաբանություն՝ կազմված զինվոր – վանականներից: Խուրհուրդն ընդունեց առաջարկն ու պատվիրեց Բեռնարդոյին շարադրել Տամպլիերների կանոնադրությունը: կանոնադրությունը չի սահմանափակվում միայն վանական կանոններով՝ պետք չէ մոռանալ, որ խոսքը վերաբերվում է ռազմական հեծելազորին: Կարելի կարծել, թե Բեռնարդոն զվարճանում էր վերականգնելով կելտական հինավուրց ավանդույթները՝ կարծես ցանկանալով կապել այս հեծելազորը կելտական հինավուրց միաբանությունների հետ: Իրականում քրիստոնեական ձևով վերստեղծում է այն, ինչ որ մի ժամանակ իրենցից ներկայացրել են Կարմիր փունջն ու ֆենիոները՝ իռլանդական ազգային շարժման մասնակիցները:

Հարկ է ուշադրություն դարձնել այս նոր միաբանության «կելտականության», և այն փաստի վրա, որ տամպլիերներն իրենց աշխարհական գործունեությունը կենտրոնացրել են կելտական հողերի վրա: Կարծես թե Սև Կույսի կաթով սնված այդ սուրբ աբբահայրը, կաղնիների աշակերտը, հաստատուն կերպով որոշած լիներ կապել ստեղծված նոր հեծելախումբը հին կելտական ավանդույթների հետ: Գուցե այդ էր կելտական հողերի վրա Տամպլիերների միաբանության ստեղծման արժեքը † Եթե օրենքների սալիկենը Տիեզերքի բանաձևերից մեկն են հանդիսանում և սրանք դուրս են բերվել Եգիպտոսից և ընկել տաճարներ կառուցողների ձեռքը, ապա այլևս զարմանալի չի թվա այն, որ սրանք էլ բուրգերի պես հանդիսանում են տիեզերական գիտության բանաձևերի իսկական «հավաքածո»: Շարտրի չափերի հարաբերակցության ու համաչափությունների մեջ կարելի է գտնել երկրագնդի չափերի ճշգրիտ գիտության նշանները, մի բան որ

բնորոշ չէր այն ժամանակների համար: Շատ հնարավոր է, որ Օրենքի Սալիկները պատճենահանված են եղել Մովսեսի կողմից Եգիպտոսի սրբազան գրվածքներից, ինչը կարող է բացատրել եգիպտացիների կողմից հրեաներին հետապնդելու փաստը, երբ սրանք հեռանում էին Եգիպտոսից և Փարավոնը որոշում է թույլ չտալ, որ դուրս գան երկրի սահմաններից:

Վավերագրերը գողանալուց հետո է, որ այս ժողովրդի մոտ սկսվում է «քաղաքակրթությունը», ահմենայն դեպս, նրանք են որ քաղաքակրթություն են տարածում ու սկիզբ դնում քաղաքակրթող հուշարձանների, ի դեմս գոթական ճարտարապետության: Բոլոր քաղաքակրթությունների մեջ հատուկ տեղ է հատկացվում կրոնական շինություններ կառուցողներին, որոնց ուսուցումը միշտ ենթադրել է նվիրումի որոշ աստիճան: Նրանց գործը կարող է մարդու մեջ հոգևոր զարթոնք առաջացնել, մասնավորապես ճարտարապետությունը, որի «ներսում» մարդը շարժվում է:

Ժողովրդի վրա ազդելու համար անհրաժեշտ էր մի նոր միջոց և առաջին հինը հեծյալների վերադարձի հետ հայտնվում է Գոթական ոճը: Շարտրի տաճարի չափերը ցույց են տալիս երկրագնդի և նրա չափերի բացարձակ ճգրիտ իմացություն և կարելի է ենթադրել, որ կառուցողները, առավել ևս նախագծողները, պետք է որ ձեռքի տակ ունենային հատուկ վավերագրեր, բացառիկ որակի գիտելիքներ պարունակող և, տրամաբանորեն, դրանք կարող էին լինել միայն Օրենքի սալիկները, որ այն հինը հեծյալները բերել էին Երուսաղեմի տաճարից:

Հիմնականում ընդունվում է, որ այս ոճը ծագել է Ցիստերի ,միաբանությունում, կամ, առնվազն, ցիստերցիները եղել են «գոթական» ոճի հետևից ճամփորդողները:

Շնորհիվ սուրբ Բեռնարդոյի Տամպլիերների միաբանութենունը ստեղծվում է որպես Ցիստերի «դուստր»: Այս միաբանութենունը ամենասերտ կերպով կապված է գոթական ոճի հետ:

Բեռնարդոն տամպլիերների վրա դրել էր հետևյալ երեք պարտականությունները.

- Գտնել Մովսեսի տապանակը
- Առաջ մղել Արևմտյան քաղաքակրթությունը
- Կառուցել տաճարը

1307 թվականի սեպտեմբերի 14-ին, Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ գեղեցիկը հրամայում է ձերբակալել իր թագավորության բոլոր տամպլիերներին: Դրանով իսկ վերջ էր դրվում, արմատախիլ էր արվում արևմտյան քաղաքակրթությունը իր ծաղկման շրջանում:

Կատարվելիք եղերագործությունը կրոնական մոլեռանդության արտահայտություն է: Որևէ միաբանություն կարող է կազմակերպվել ու ղեկավարվել միայն ու միայն կրոնական օրենքների մասնագետների կողմից, այսպիսով որ պարզ երևում է, որ ամենի սկզբնաղբյուրը Վիլհելմ Փարիզեցին է, որն անկասկած նաև ոգևորողն է: Ակնհայտ է, որ Տամպլիերների միաբանության

ծավալումը լրջորեն սպառնում էր եկեղեցու շահերին: Եթե Ֆիլիպ գեղեցիկը աչք էր տնկել Միաբանության ունեցվածքին, ապա Սրբազան Ինկվիզիցիան ցանկանում էր հենց Միաբանությունն ինքը: Ինկվիզիցիան ցանկանում էր քրիստոնեական հավատքի միակ ու միահեծան վերահսկողը լինել, ըստ իր մակարդակի, ամբողջ քրիստոնեական աշխարհում: Սակայն տամպլիերներն ըմբոստանում են ամեն տեսակ խստությունների դեմ և պետք է, որ անհայտանային:

Ամենից առաջ առիթներ փնտրեցին միաբանության գործունեությունը ամբաստանելու, հետո՝ միաբանության անդամներին՝ ընդհուպ մինչև ամենաբարձր մակարդակի ղեկավարների ձերբակալելու համար: Ինչո՞ւ չեն դիմակայում: Նրանց օրենքն արգելում է զենք բարձրացնել քրիստոնյաների դեմ: Իրավունք չունեին զենք բարձրացնելու մինչև որ երեք անգամ հարձակման չենթարկվեին: Միայն Մեծ մագիստրը կարող էր դիմակայելու հրաման արձակել ու հրաման չունենալու պատճառով նրանք ուղղակի սահմանափակվեցին օրենքին ենթարկվելով: Բանտում փակված, կտտանքներով հարցաքննությունների ենթարկված նրանք տառապանքների գնով «խոստովանել» են իրենց «հանցանները»: Համաձայն արքայական հրամանի, նրանք, ովքեր չեն խոստովանել իրենցից սպասված «մեղքերը», պարզապես անհայտացել են և դատավարության ընթացքում ինչ ցանկացել այն ասել են մեղադրյալների հասցեին:

1314 թվականի մարտի 18-ին Տամպլիերների Մեծ Մագիստր Սանտյագո դե Մոլեյը հրապարակայնորեն հրաժարվել է իր խոստովանություններից ու Սիտե կղզում այրվել խարույկի մեջ, որպես հերետիկոս և մեղսագործ:

Քաղաքակրթությունը սայթաքեց: Հին իմաստության արմատներին վերադառնալու Վերածննդի բոլոր ջանքերը բախվեցին եկեղեցիներին, ինչպես Պոտրոսի, այնպես Կալվինոյի, որոնք գոցեցին բոլոր ճանապարհները՝ կտտանքների միջոցով ու դահիճների ձեռքով:

ՄԵՐ ՏԻՐԱՄԱՅՐԸ վատաբանվեց մի մասի կողմից և դարձավ կեղծ բարեպաշտության ու առևտրի առարկա՝ մյուսների կողմից:

Հերմետիկություն. Վերածնունդ.

Վերածնունդն ու նրա աչքի ընկնող գործիչները:

Հերմետիզմը, սկիզբ առնելով իր դարերի խորքը գնացող ալեքսանդրիական արմատներից, նկատելի կարևորություն ստացավ մեծագույն ներկայացուցիչների գործերի շնորհիվ, սկսած «գիր ու գրականության վերականգման» (”renascentes litterae”) մի ժամանակաշրջանից, որ հայտնի է որպես

Վերածնունդ, որի սկվեց Նեոպլատոնիզմի վերահայտնվելով և հնագույն տեքստերի միջոցով ամբողջ հերմետիկ ավանդույթների վերահայտնագործումով, քրիստոնեության կողմից Կաբալայի որդեգրումով: Բոլոր հիմնավոր փոփոխությունները՝ որպես Հերմետիզմի հաղթանակ, սկսած 1450 թ. գերիշխում ու խորանում էին իտալական մշակույթի մեջ, որտեղից էլ սկսեցին տարածվել Ալպերից դեպի հյուսիս:

Վերածնունդը կարելի է համարել նախկին ժամանակահատվածում սկված փոփոխությունների գագաթնակետ, որ, առանց կասկածի, հիմնավոր բեկում էր, եթե ոչ խզում միջնադարի հետ: Վերածնունդն, իր բոլոր արտահայտություններով, ժամանակի ընթացքում գնում է դեպի Դասական կոչվող հնագույն շրջանի մշակույթի վերարժեքավորում, ամբողջ միջնադարյան աշխարհի վերլուծություն՝ դառնալով սուր քննադատության միջոց, որ խիստ տարբերվում է տիրող ժամանակաշրջանի ընդհանուր ոգուց:

Հերմետիկ ավանդույթներով հետաքրքվող առաջադեմ անձինք, չնայած կրում էին իրենց միջնադարյան մտքի ընդհանուր ազդեցությունը, շատ բան վերցրին հեթանոս աշխարհի մտավոր հարստությունից, հերմետիկ գրվածքները վերստին հայտնագործվել էին, ուսումնասիրվել և շրջանառության մեջ դրվել, մասնավորապես տպագրության գյուտից հետո և որպես դրա ուղղակի արդյունք: Այս տեքստերը մեծ հեղինակություն են վայելում այն ժամանակաշրջանում, երբ աշխարհը հատկապես սկսել էր գնահատել հունա- հռոմեական քաղաքակրթությունը: Պլատոնի, Նեոպլատոնականների գործերում, Օրֆեոսի հիմներում և Հերմետիզմի մեջ հայտնաբերվեց ամբողջ գաղտնի իմաստությունը որ հնարավորություն էր տալիս ետ գնալ դեպի հին դարերի խորքը, որոնք տոգորված էին ու ոգեշնչված Աստվածայնության գաղափարով Հիսուսի գալուց դեռ շատ առաջ: Մարդասիրության հիմնական և կարևորագույն ներդրումը դա. «Համոզմունքն էր մարդու իրական արժեքի և նրա մեջ առկա հնարավորությունների մեջ, համոզմունք, որ իր գագաթնակետին շնորհիվ հերմետիզմի վերածննդի ու ու նրա հիմքի վրա առաջացած շարժման, հիմնականում շնորհիվ Ֆիսինոյի, Միրանդոլայի, Ագրիպային, Պարացելսիուսի, Դեեյի ու Ջորդանո Բրունոյի» (Կավեդիշ. «Մոգության պատմություն»):

Վերածնունդը կարողացավ ստեղծել ամրացնել նվիրյալների մեջ «բազմակողմանի մարդու» գաղափարը, որ զարգացնում ու գնահատում է իր էության բոլոր կողմերը, որ հպարտորեն փորձում է հասկանալ ամեն ինչ, հիմնվելով համապատասխանությունների, միկրո և մակրո տիեզերքների տեսությունների վրա, և տեսնում իրեն՝ մարդ արարածին, որպես ամբողջ աշխարհի և Աստծո մանրակերտ տարբերակ:

Տնտեսական փոփոխություններնը, որ կատարվեցին դրամատիրության կապիտալիզմի, ի հատ գալու հետ, բուրժուազիայի կազմավորումը, որ ներխուժում է հին կարգերը քանդելով ու ձևավորում նոր տեսակի մարդուն՝ գործարար հատկություններով օժտված, հարստության

ձգտող և զգացական աշխարհին ավելի մոտ կանգնած, բնակչության մեջ տեղի ունեցող շարժը (քաղաքների վերաշխուժացումն ու բնակչության աճը), մտածելակերպի մեջ տեղի ունեցող փոփոխությունները (անհատականության հաստատումը), գիտնականների հայտնագործությունները (Կոպեռնիկոս, Կեպլեր, Գալիլեյ) և գիտության նկատմամբ այլ վերաբերմունքի առաջացումը՝ այն որպես մարդկության առաջընթաց զարգացմանm նշանակետ դիտելը, տեխնիկայի ծաղկումը, մշակույթի ավելի լայն տարածման հնարավորությունները (համալսարաններ, գիտելիքների կարևորության ընդունում), քաղաքականության նկատմամբ տարբեր մոտեցման առաջացումը (Մակիավելլի); համագոյակցության գաղափարը և ի վերջո այդ ամենի գագաթնակետը՝ նոր, ժամանակակից պետության ստեղծումը: Այս ամենն իր հետ բերում է կրոնի մի նոր ճգնաժամ, որ սկսվում է հունա-հռոմեական հեթանոսության ավելի լայն ազդեցությամբ, որ վերաճում է կրանական հակամարտությունների մի ժամանաշրջանի, որի առավել աչքի ընկնող արդյունքը դարձան Կաթոլիկ եկեղեցու բարեփոխումները, և վերջապես բեկումը հենց իր՝ մարդ արարածի էության և նրա հասարակության մեջ ունեցած դերի ընկալման մեջ, երբ մարդն ընդունվում է որպես պատմության գործող անձ, իր սեփական ուժերի տեր և աշխարհը փոխելու ունակությամբ օժտված: Սրանք Վերածննդի միայն մի քանի գործոններն են, որոնք այն դարձրեցին ժամանակակից մարդու կյանքի ու հավատամքի հիմնասյուներից մեկը:

Մարդասիրություն երևույթի իտալական ծագումը հասկանալու և ըմբռնելու համար անհրաժեշտ է նշել մի քանի գործոնների միասնությունը

- Տնտեսական - հասարակական նախապայմանների առկայությունը
- Հունա- հռոմեական մշակութային դեռ լիովին չվերացած կապը;

Ինչպես նշել ենք վերևում, մարդասեր, հումանիստ մարդն իր ոգևորության աղբյուրը փնտրում է խոր հնադարում, դպրոցներում և կաճառներում սովորեցնում է դասական լեզուներ, հետևում է արտահայտության նրբաճաշակությանը, ուղղակի կամ անուղղակի կերպով խթանում է հեթանոսության վերածնունդը, վերականգնում է Պլատոնի իդեալիզմը՝ հակառակ արիստոտելական դոգմատիկ մոտեցման, ջանում է գտնել մարդու նոր որակ՝ դիտելով նրան որպես միջնորդ երկնքի և երկրի միջև»:

Հերմետիկություն. Կաբալա.

Ավանդական իմաստության արտահայտությունների մեջ Հերմետիկ քրիստոնեական

Կաբալան դարձավ 15 –րդ դարի Վերածննդի իսկական ոգեշնչողը, որը շատ բան վերցնելով միջնադարյան ու հնագույն աղբյուրներից, տարածվում է մինչև 17-րդ դար, գիտելիքների միջնորդ հանդիսացող խորհրդանշանների լեզվով արտահայտելով այն համահունչությունը, որ գոյություն ունի ավանդական, եգիպտական, հրեական, հունական, լատինա- քրիստոնեական ու արաբական ձևերի միջև:

Այն դարաշրջանում, տոգորված համակամության ոգով, հանդիսանում է լույսի արարիչ, գտնվելով նյութի ստացած տարբեր ձևերից շատ անդին, դրանք համադրում է՝ ստեղծելով մի համահունչ ամբողջություն, դրանցից ամեն մեկի ձևը թողնելով իրական ու անեղծ: Այսպիսով դառնում է իրական ճշմարտության մի ազատ արտահայտություն, որին գիտություններն ու արվեստը ևս օժանդակում են, քանի որ ընդունված է դրանք համարել Մուսաների արտահայտիչներ: Այդ լույսը ուղղություն է ցուց տալիս դեպի ետ, դեպի սեփական էությունը, դեպի սեփական կարևորագույն սկիզբը:

Այս մոդելը բյուրեղացավ Ֆլորենսիայում, որտեղ Մարսիլիո Ֆիսինոն և Ջովանի Պիկո դե Միրանդոլան, իրենց կատարած թարգմանություններ ու երկխոսությունների միջոցով եգիտական, հրեական ու հունական ամբողջ իմաստությունը վեր են ածում լատիներենի, ցույց տալով, որ տարբեր անունները, որ կիրառվում են տարբեր աղբյուրներում, իրականում վերաբերվում են միևնույն Սկզբունքներին:

Ռամոն Լյուլյը դարձավ այն «կամուրջներից» մեկը, որ Ֆլորենսիայի շրջանակներում կապ հանդիսացան ընդհանուր Քրիստոնեական Կաբալայի ու լատինականի միջև: Նրան կարելի է համարել Պլատոնական կաճառի կենտրոնական դեմքերից մեկը,ո տարբեր ավանդույթների միջև արդյունավետ երկխոսության «տարածքը», որ վերաբացվեց Կոսմե Մեդիչիի կողմից Գեմիստո Պլեթոն Բյուզանդացու ժամանումից շատ չանցած, որ իր հետ բերեց հունարեն գրություններ, որ պահված էին Բյուզանդիայում և որոնց թվում էին Հերմես Եռամեծի և Պլատոնի գործերը, ինչպես նաև Յամբլիկոյի, Պրոկլեսի, Պորֆիրիուսի և ուրիշների: Դրանք ալեքսանդրյան նեոպլատոնական տեքստեր էին, որոնցում պարփակված էր պարսկական, քաղդեական ու եգիպտական ավանդույթները և որոնք պիտի թարգմանվեին լատիներեն հիմնականում Մարսիլիո Ֆիսիոյի՝ Ֆլորենսիայի Գիտության կաճառի մեծ մագիստրի կողմից:

Շրջանակը, որին պատկանում էր Ջովանի Պիկո դե Միրանդոլան:

Պիկոյին հասանելի էին հերմետիկ գիտությունների սկզբնաղբյուրները, որ թարգմանվել էին Կաճառում և «Կորպուս Հերմետիկում» վերնագրի տակ միավորում էին այնպիսի աշխատություններ, ինչպիսիք էին Պոյմանդրեսի և Ասկլեպիոսի աշխատությունները: Ձեռքի տակ ուներ

նաև Պլատոնի «Երկխոսությունների» թարգմանությունը: հասանելի էր նաև Կաբալան: տեղյակ լինելով Կաբալայով, լինելով նվիրյալներից մեկը, եբրայերենի դասընթացների միջոցով, որ Պիկոն ստացել է կրոնափոխ հրեաներից, որոնց թվում էին Ֆլավիոս Միհրդատը, Պաբլո Էրեդիան և Էլիաս Մենդիգոն՝ կաբալայի 13-րդ դարի Իսպանիայի իրականության մեջ զարգացած տարբերակի խորը գիտակները:

Ինչպես եբրայերեն, հունարեն ու լատիներեն լեզուներին հիանալի տիրապետող Միհրդատը, այնպես էլ Պաբլոն և Էլիասը, Պիկոյին են փոխանցում հրեական հիմնական տեքստերը և դրանց ընթերցման ու ընկալման «բանալիները», հիմնված համապատասխանությունների օրենքի վրա, որ թույլ է տալիս թվերի ու բաղաձայն տառերի համադրություններ ու համադրությունների փոփոխություններ: Հիմնվելով այդ գիտելիքների վրա Պիկոն հնագույն իմաստությունների մեջ հայտագործում է քրիստոնեական կաբալիստական տեքստերի ընթերցման բանալիները, ինչը նրա մեջ ամրապնդում է Քրիստոսի աստվածայնության նկատմամբ հավատքը, ուղղում դեպի Սուրբ հայրերի և Միջնադարի ավանդական ճանապարհը, որ բացել էին Սուրբ Խերոնիմը և Նիկոլաս դե Կուզան:

Քրիստոնեական ու Հերմետիկ կաբալիստական հոսանքների միախառնումը մի ընդհանուր հոսանքի մեջ, իր հիմնական խորհրդանշաններում բնորոշ դիմագիծ է տալիս արևմուտքի ավանդությանը: Այստեղից էլ Պիկոն անում է իր իննսուն եզրահանգումները, առաջարկելով ցույց տալ ու ապացուցել բոլորին, ում կարող էր հետաքրքրել, այդ երկուսի փոխադարձ կապը հիմնվելով այն սկզբունքների վրա, որ ունեն դրանցից յուրաքանչյուրի տիեզերակազմական պատկերացումներն ու հաստատել, որ այդ սկզբունքներն իրականում նույն, հիմնական և միակն է տարբեր արտահայտություններով:

Հերմետիկություն.
Ռոզենկրոյցների շարժումը..

1641 – 1620 թվականների միջև ընկած ժամանակահատվածում Եվրոպայում ծավալվում է մի շարժում որ ստանում է «Ռոզենկրոյցների շարժում» անվանումը: Գերմանիայում պատերի վրա հայտնվում են թռուցիկներ՝ գովազդելով ժամանակի ամենապայծառ մտքերի արդյունք հանդիսացող երեք գրվածքները՝ La Fama Fraternitatis, La Confessio y Las Bodas Químicas.

Ի տարբերություն գրական այլ ստեղծագործությունների ու հորինվածքների, այս տարօրինակ տեքստերը չէին ստեղծված միանգամից, մի մարդու կողմից, այլ արտացոլում էին մի խմբի մտածելակերպն ու հոգևոր պատկերացումները, որ հնարավորին չափ խորացնում է տիրող իրականության նկատմամբ յուրաքանչյուրի

պատասխանատվությունը: Դրանք բոր-բոքուն մտքերի երազանքներ կամ ամեն բան առասպելի վերածողների կեղծիքներ չեն, դրանք մի քանի մարդկանց մտքերի արձագանքն են, որ, ցանկանալով լսելի լինել, առաջարկում են այդ պահի մտավոր ու հոգևոր կողմերի այլընտրանք, այնուամենայնիվ, նաև մնալով ինչ որ չափով առանձնացած, պահելով նվիրյալների գաղտնիքը, հարգելով աստիճանների տարբերությունը և գիտենալով, որ, ընդհանուր առմամբ, իրենց ուղին չի կարող լինել տեսանելի կամ արտահայտելի:

Հերմետիկության տեսանկյունից, այս գրվածքները վեր էին իրենց ժամանակների իրադարձություններից ու խարդավանքներից, որոնց վիճակված էր դիմակայել:

Նրանք, ովքեր ձեռք բերեցին այդ գրվածքները, միայն վերականգնեցին իրենց համար հավերժական այն խորհրդանշանները, որ կոչված էին խթանել միտքը՝ ուղղելով այն իրական ալեքսանդրյան արմատներին ու այն մակարդի վրա խմորված Վերածննդի գաղափարներին:

Այդ գրվածքները ի հայտ բերեցին զարմանալի հակասություններ: դա հոգևոր ցնցումների ժամանահատված էր, Լյութերի և Կալվինոյի գաղափարների խոր ազդեցության տակ գտնվող: յուրաքանչյուրը կասկածում է իր դրացուն հերետիկոսության մեջ: Բազմաթիվ սրտերում եռում է ըմբոստությունը, սակայն միևնույն ժամանակ վախենում են ճիզվիտների հզորությունից ու ինկվիզիցիայի գիշատիչ ճանկերից:

Ծարժումը պաշտպանում է համաշխարհային ընդհանուր բարեփոխումների գաղափարը: Այս բարեփոխումները կարող են իրագործվել մոգության, կաբալայի, ալքիմիայի ու գիտական՝ բժշկական ու մաթեմատիկական մտքի, առաջընթացի միասնականության շնորհիվ և ունեն մնացած բոլոր գիտությունների ու բոլոր իմաստունների համագործակցության կարիքը:

Հնարավոր է, որ Ռոզենկրոյցյան շրջանակներին շատ մոտ կանգնած երկու անձինք՝ Մայքլ Մեյերն ու Ռոբեր Ֆլադը (Michael Maier, Rober Fludd) Անգլիա բերած լինեն ռոզենկրոյցյան ուսմունքը, ներկայացնելով ռոզենկրոյցներին որպես եգիպտական դպրոցների, օարսկական մոգերի ու պյութագորականների հետևորդ:

Հերմետիկություն. Ազատ Որմնադրություն (Մասոնականություն).

Հերմեսը, լինելով հին աստված, կարողանում է հեռավոր ժամանակների խորքից ներկայացնել աստվածությանը միջնորդի դերում և ուսուցման միջոցով հիմք դնել իմացությանն ու փոխադարձ կապին

ամենաբարձր տիեզերական ոլորտների հետ: Այս ձևով նրա հայտնությունները կազմում են մի ավանդույթների մի բարդ ամբողջություն, որոնց նպատակն է առաջնորդել Մարդուն դեպի զարթոնք, որպեսզի փնտրի իր սեփական ինքնությունը, Տիեզերքի արտացոլումը լինելու իմացությունը, և այս իմացությունն է, որ պարտավորեցնում է սանին ըմբռնել, տեսնել ամենն, ինչ կատարվում է իր ճանապարհին, իր ներաշխարհում, իր «ձևավորման», իր կայացման ընթացքում:

Այս գաղափարն է արծարծում նաև «Կորպուս Հերմետիկումը»՝ հնագույն սուրբ գրքերի ամբողջությունը, որ բխում է ավանդական մտածողությունից, գտնվելով հունա- եգիպտական աստվածության՝ Հերմես աստծո, կամ Հերմես Եռամեծի հովանավորության տակ, որին համարում էին բառի (բանն) աստված, բխում էր նրա՝ Տիեզերաբանության գաղտնիքների կրող, հոգիների տիրակալ Հերմեսի ուսմունքից, որի ազդեցությունը, սկսած մեր թվարկության առաջին դարերից մինչև մեր օրերը, որպես «ճառագայթման» կենտրոն ունենալով Ալեքսանդրիան, տարածվում է ամբողջ միջերկրածովյան աշխարհում, այն ամենի վրա, ինչ կարելի է համարել Արևմուտք կամ նրա ազդեցության ոլորտ: Հնագույն «տոհմածառից» ծագող այս հոսանքը, հիշենք, որ Հերմեսը Եգիպտական Տոտ աստվածն է և հերմետիկ գրվածքները՝ Տոտի սուրբ գրքերն են, իր մեջ ներառում է հին շրջանի ամենակրևոր հույն, հռոմեացի ու բյուզանդացի հեղինակներին:

«Այս մտածողությունն ընդունում է մարդուն որպես միջնորդ (նյութական և ոչ նյութական աշխարհների միջև: Բացատր. թարգմանչի), ոչ միայն նրա խաղացած կենտրոնական դերի պատճառով, այլ նաև դիտելով նրան որպես հավերժի մեջ կատարվող ու երբեք չավարտվող ստեղծարարության հեղինակի՝ Տիեզերական մեծ Ոգու փոքր տարբերակ, կենդանի, մշտապես փոփոխվող, և որն ի վիճակի է կատարել ցանկացած փոփոխությունները, քանի որ հանդիսանում է այդ հսկա ամբողջության այն կետը, ուր կենտրոնանում են բոլոր ստեղծարար ուժերը, թագադրելով ու իմաստ հաղորդելով աստվածային ամբողջ ստեղծարարական ծրագրին, վերականգնելով բոլոր այն կապերը, որ բացահայտում են ընդհանրությունները, քանի որ զգայական աշխարհն արտացոլվում է իմացականի ու իմացականը՝ զգացականի մեջ: Բանն առաջնային արտահայտվում է մարդկայինի մեջ, հնարավոր դարձնելով Տիեզերքի կարգի վրա ազդող մարդու ի հայտ գալը, որ նպատակակետն այն նվիրյալների, որ գիտեն կարդալ բնության նշաններն ու Տիեզերածրային փոփոխությունների խորհրդանշանները, հարմարվելով այդ մեծ ճամբորդության պայմաններին որ նույնն է, ինչ Իմացությունը»:

17-ր դարի վերջերին մի նոր մոտեցում աշխարհով մեկ տարածում է հերմետիկ տեսությունները, որ անցյալում բավական երկար ժամանակ տիրել են մարդկային մտքերին, ինչպես նաև մոգական- գիտական իմացությունները, որ հիմնված լինելով ամուր այուների վրա, մեծապես աճել էին ու հանգեցրել հերմետիկ գիտությունների

ավանդականության մեջ ամենաակնառու, հետաքրքիր ու նորարարական ձեռնարկների բուռն ծաղկման:

Ալքիմիան մասնակիորեն վերականգնում իր գրավչությունը՝ կամուրջ համարվելով գիտականի ու հոգևորի միջև, սակայն ընդհանուր առմամբ հերմետիզմը կարծես ժամանակավոր նահանջ է ապրում, քանի որ թվում էր, թե ոչինչ չէր կարող նպաստել Վերածննդի դարաշրջանի մեծագույն դեմքերին հավասար մեծությունների ի հայտ գալուն: Սակայն մուտքը 17-րդ դար նշանավորվում է գաղտնի և ընդհատակյա մի շարք ընկերությունների կազմավորմամբ,որոնք հնչեցնելու էին տիրող նյութապաշտականության դեմ ընդվզման առաջին շեփորները:

Իր երկար պատմության ընթացքում Հերմետիզմը տարբեր ձևեր է ընդուներ, ճիշտ այնպես ինչպես դա պատահել է նաև անցյալում շատ դպրոցների և Նոր դրաշրջանում՝ Ազատ Որմնադրության հետ, որի բարձրագույն մոգության, աստղաբաշխության, պյութագորական ուսմունքի, կիրառական ալքիմիայի յուրացման վրա հիմնված արմատների հերմետիկությանը պատկանելն անվիճելի փաստ է, քանի որ դրանք բոլորը առկա են Ազատ Որմնադրության խորհրդանշանների, ծեսերի մեջ, միասնաբար կազմելով այն հեծանները, որոնց օգնությամբ բարձրացվել է ամբողջ շինությունը:

Ազատ Որմնադրությունը սերտ կերպով կապված է Հերմետիկ ավանդույթների ու դրանց խորհրդանշանների հետ և կարող է դիտվել որպես Ալքիմիայի Արվեստի փոխադրություն՝ հիմնված կրակի ու մետաղի փոխակերպման, կառուցող, Տիեզերակառուցողության արտացոլումը հանդիսացող Ստեղծարար Գիտության խորհրդանշանների վրա:

Ազատ Որմնադրության, որ հանդիսացել է կրողն ու տարածողը Հերմետիկ ավանդույթների ու գաղափարների, որոնց ինքն էլ մշտապես նպաստել է, ունեցած դերը միշտ էլ կարևոր է եղել՝ ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում: Չնայած դրան, պարզ է, որ Ազատ որմնադրության հնագույն սովորույթներն ու սովորությունները, խորհրդանշաններն ու ծեսերը, ինչպես նաև հիմնական գաղտնիքները, փոխանցվել են առանց ընդհատման՝ հեռավոր ժամանակներից սկսած, և գործնական ու խորհրդածական բոլոր քայլերն ուղղված են եղել փոխանցվող հավերժական ճշմարտությունների հարմարեցմանը անցնող ժամանակի յուրաքանչյուր փուլի պայմաններին, ցույց տալով, որ գործնականությունը վերաբերվում է ոչ միայն կառուցման ֆիզիկական, գործնական աշխատանքին, աշխատանքների մասնագիտական ծրագրավորմանն ու նյութական իրականացմանը, այլ նաև այդ ուղուն նվիրվողի մեջ Ազատ Որմնադրության կողմից իմացականության շենքի «կառուցման» հնարավորությունն էմ այն միջոցների կիրառումով, որ տալիս են մեզ Սրբազան Գիտությունը, նրա խորհրդանշաններն ու ծեսերը:

Հերմեսն ու Հերմետիզմը, որոնցից մեջբերումները սովորական երևույթ են Ազատ Որմնադրության մեջ և որոնց վերագրվում է բոլոր գիտությունների ուսուցանումն ու տարածումը, միշտ էլ մեծ հեղինակություն

են վայելել Արևմտյան մշակույթի երկարատև պատմության տարբեր ժամանակահատվածներում: Այդպես է եղել նաև հետվերածննդյան շրջանի ալքիմիկոսների ու այսպես կոչված հերմետիկ իմաստասերների շրջանակներում, նույն գաղափարներն են արծարծվել Ռոզենկրոյցների եղբայրության կողմից: Հաշվի առնելով Հերմետիզմի և բոլոր այլ ազդեցությունները, որ ընդունել է Ազատ Որմնադրությունը թույլ են տալիս այն դիտել որպես Հերմետիկ իմաստության մի պահոց, այդ իմաստությունը վերջին հարյուրամյակների ընթացքում տարածող ուժ, Ալքիմիայի ու նաև Ռոզենկրոյցների սկզբունքների ժառանգորդ:

Չնայած իրականում Ազատ Որմնադրության արմատները գնում են մինչև միջնադարյան քարերի հանքերը, և այդ իսկ պատճառով նաև մինչև կրոնական խստություններն այդ դարերի աշխարհընկալումը, չի կարելի մոռանալ, որ այն ժամանակահատվածից մինչև 18-րդ դար, երբ, ձև են ստանում Ազատ Որմնադրևության տեսական գաղափարները, այդ Որմնադի շինարարներն ապրել են Վերածննդի ՆՈՐ շնչով տոգորված աշխարհում , ոգեշնչված «Կորպուս Հերմետիկումով», պյութագորական գաղափարներով, նաև օրֆեոսյան հիմներով ու քաղդեական գուշակների արվեստով: Սակայն ամենից ավելի, իհարկե, Պլատոնի գաղափարներով, նորպլատոնականներով և Պրոկլեսով, ինչ տեսանելի կերպով արտացոլված է նրանց կառուցած պալատների, եկեղեցիների, պարտեզների ու աշտարակների, ներքին և արտաքին ճարտարապետության մեջ, նրանց ստեղծած մեխանիկական սարքերի, բնական մոգության հրաշքների և գիտության ու արվեստի (նկարչություն, քանդակագործություն, ոսկերչություն և կահույքագործություն) ասպարեզում նրանց կատարած փորձերի մեջ, որ սկիզբ առան հիմնականում Մեդիչիների՝ գիտության կաճառում, որ գլխավորում էր Մարսիլիո Ֆիսինոն, որի ազդեցությունը տարածված էր Եվրոպայով մեկ գրեթե երեք հարյուրամյակ:

Վերը նշվածից հետո ավելի քան ակնհայտ է, որ Ուրարտու օթյակն իր պրոմեթևսյան զգացումներով, փնտրում է իր արմատները դարերի խորքում, հայացքով ընդգրկում ներկան և փայփայում իր երազներն այնպիսի ապագայի, որ բոլոր մարդիկ եղբայրացած կլինեն իրենց գաղափարներով ու ձգտումներով, միավորված Ազատ Որմնադրության կողմից կկարողանան Գիտությունն ու գիտակցությունը հասցնել իրենց ամենաբարձր մակարդակին:

.